պէսզի կրկնապատիկ ուշադրութեամբ վերաբերուին նրանց՝ թոյլ չտալով, որ նրանք ոեւէ բանի կարիք զգան: Սրանով նրանք ապացուցած կը լինին, որ վրացիները չեն մոռացել հիւրասիրութեան հին աւանդութիւնները»:

Յայտարարութեան հետ, որի տակ ստորագրել են 42 զինուոր եւ բժշկական մասի 5 պաշտօնեաներ, հետեւեալ նամակն էր ուղարկուած «Բարբա»ի խմբագիր Դ. Շարաշիձէին.

«Սիրելի Դաթիկո,

«Ուղարկում եմ քեզ մեր զինուորների այս յայտարարութիւնը, որպէսզի տպագրես «Բարբա»ի մէջ՝ խնդրելով բոլոր վրացական եւ ռուսական թերթերին, որ արտատպեն: Կարող ես յայտարարութեան աւելացնել եւ քո մեկնութիւնները, որոնք կարող են շատ օգտակար լինել՝ նկատի ունենալով կրքերի այս գերագրգիռ վիճակը: Կանխօրէն յայտնում եմ զինուորների եւ իմ շնորհակալութիւնը քո այս ծառայութեան համար:

«Մնում եմ ձեռքդ: Բարեւներ բարեկամներին: Ս. Զեղգենիձէ:

20 Դեկտեմբեր, 1918»

Այսպէս էր վերաբերւում հայ ժողովուրդը դէպի հարեւան ժողովրդի զաւակները, թէեւ նրա «հերոսութիւնն ու քաղաքացիական պարտաճանաչութիւնը» ոչ ոքի կողմից չէր թմրկահարւում: Այսպէս էր հասկանում իր դերը ե՛ւ Հայաստանի կառավարութիւնը վրաց ժողովրդի հանդէպ, թէեւ նա ոչ պարլամենտի ամբիոնից եւ ոչ էլ հրապարակային կոչերով բարեկամական զգացմունքների հաւաստիքներ չէր շռայլել այդ ժողովրդի հասցէին...

* * *

Մեր այս տեսութիւնը վերջացնելու համար, մնում է մի քանի խօսք էլ ասել վիրահայ ազգային փոքրամասնութեան դէմ հայ-վրացական պատերազմի առթիւ կատարուած հալածանքների պատճառների մասին:

Ասացինք, որ վրացական շրջանները այդ հալածանքները ներկայացնում էին իբրեւ «պատերազմական անհրաժեշտութիւն», պայմանաւորուած այն հանգամանքով, որ, պատերազմի ժամանակ, Վրաստանի հայերը թշնամական դիրք էին բռնել դէպի վրաց կառավարութիւնը եւ զօրքը:

Որ այս մեղադրանքը ըստ ձեւի անհիմն է, այդ մենք տեսանք այն փաստից, որ յիշեալ հալածանքները վերարծարծուեցին եւ իրենց գագաթնակէտին հասան այն օրերին, երբ զինադադարն արդէն կնքուած էր հայերի եւ վրացիների միջեւ, թշնամական գործողութիւններն խսպառ դադարած էին եւ երկու կողմից նշանակուած պատուիրակութիւնները հաշտութեան պայմաններն էին մշակում Թիֆլիսում: Նման պարագաներում տեղի ունեցած հալածանքները բացատրել «պատերազմական անհրաժեշտութեամբ» տրամաբանական անհեթեթութիւն է, ուրիշ ոչինչ:

Քննենք այժմ այս «պատերազմական անհրաժեշտութիւնը» ըստ էութեան:

Կասկած չկայ, որ հայ-վրացական կռիւների ժամանակ, Վրաստանում գտնուած հայերի համակրանքը Հայաստանի կողմն էր: Անգամ եթէ այս բոլոր հայերն էլ Վրաստանի քաղաքացիներ լինէին — որ չէին ի հարկէ — նրանք ներկայ դէպքում այլ վերաբերմունք ունենալ չէին կարող: Որովհետեւ վրացական պետութիւնը, եթէ նա նոյնիսկ այնքան անանխանձելի վիճակ չունենար ազգերի իրաւահաւասարութեան տեսակէտից, անկարող էր ընդամէնը վեց ամսուայ ընթացքում պատուաստել իր հպատակ հայերի մէջ քաղաքացիութեան այնպիսի զօրեղ զգացմունք եւ գիտակցութիւն, որ, սրանց համեմատութեամբ, դարերի ընթացքում արմատացած ազգային-կրօնական զգացմունքներն ու տրամադրութիւնները ստորադաս նշանակութիւն ստանային:

Ճիշդ է, այդ ժամանակները Վրաստանի կառավարութիւնը եւ սոցիալ դեմոկրատական «Էրթօբայի» եւ «Բարբայի» խմբագրութիւնները հեղեղւում էին հեռագրներով ու գրութիւններով, որոնցով վիրահայ գանազան համայնքներ ու շրջանակներ իրենց զայրոյթն էին յայտնում Հայաստանի «հակայեղափոխական կառավարութեանը», որ «յարձակուել էր Վրաստանի դեմոկրատիկ Հանրապետութեան վրայ»: Սակայն, այս «ցոյցերը» ոչ ոքի մոլորեցնել չէին կարող: Նախ՝ որ նրանք շատ էին յիշեցնում այն հանրագրութիւնները, որ համիդեան կոտորածների ժամանակ հայերն ուղարկում էին Բարձր Դուռը՝ «բարեխնամ կա-